ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2015 – 2020)

Խմբագրական խորհուրդ՝ **Ա. Հ. Մակարյան** (նախագահ), **Մ. Ա. Ճաղարյան, Ա.Մ.Հովսեփյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2020, 79 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 6

Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 22

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 40

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 56

Բնագավառ 5. Գիտություն և նորարարություն 67

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 75

Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է 2019-20 ուստարվա ավարտին՝ ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացման արդյունքների վերլուծության շրջանակներում՝ Մասնաճյուղի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև տարեկան և եռամյա հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի և հաջորդ SWOT /ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների/ վերլուծությունների համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ/ առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորարարություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքի գնահատման առանցքային և «առողջական» վիճակի ցուցանիշները:

Կատարվել է ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2015-2020 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 68 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

Յուցանիշ 1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)
Յուցանիշ 1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
Յուցանիշ 1.4.	Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)
Յուցանիշ 1.5.	ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
Յուցանիշ 1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
Յուցանիշ 1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
Յուցանիշ 1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)
Յուցանիշ 1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.15.	Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

Ցուցանիշ 1.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	**405**	**434**	**370**	**237**	**336**
Բակալավրիատ (առկա)	**208**	**228**	**195**	**103**	**220**
Հումանիտար գիտություններ	93	112	103	46	94
Բնական գիտություններ	49	60	45	21	42
Տնտեսագիտական	45	41	24	24	60
Կիրառական արվեստ	21	15	23	12	24
Բակալավրիատ (հեռակա)	**197**	**206**	**175**	**134**	**116**
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Կիրառական արվեստ	0	0	0	0	0

2019/20 ուստարվա ընդունելության գործընթացում գրանցված դիմորդների թիվը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Առկա ուսուցմամբ դիմորդների թիվը ավելացել է բոլոր կրթական ծրագրերով (ցածր ցուցանիշ գրանցվել է «Դիզայն» կրթական ծրագրով): Համեմատաբար շատ հոսք կատարվել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում (կազմել է դիմորդների ընդհանուր հոսքի 43%-ը):

Առկա ուսուցմամբ նախընտրելի են համարվել հիմնականում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Ֆինանսներ» (ըստ ոլորտի), «Անգլերեն լեզու և գրականություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ նախընտրելի կրթական ծրագրերն են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը:

2014թ.-ից ժամանակավորապես դադարեցվել է մագիստրատուրայի ընդունելությունը:





Յուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ընդհանուր դիմորդների թիվը	11803	11324	9710	5456	11046
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	208	228	195	103	220
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	1,76%	2.01%	2,01%	1.89%	1,99%

Գնահատման և թեստավորման կենտրոնի հրապարակած վերլուծության համաձայն 2019-2020 ուստարվա միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրվել է 11046 դիմորդ: Ըստ այդմ՝ ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասն ընդհանուր դիմորդների համակազմում համեմատաբար կայուն է և կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում կազմում է մոտ 1,99%՝ գերազանցելով 2015-2016 ուստարվա ցուցանիշը: Հաշվի առնենք, որ 2017-2018 և 2018-2019 ուստարիների վերլուծությունը չէր արտացոլում օբյեկտիվ պատկերը, քանի որ 12-ամյա կրթության անցմամբ հանրապետությունում և Տավուշի մարզի ավագ և միջնակարգ դպրոցներում նվազել էր շրջանավարտների և դիմորդների ընդհանուր թիվը:





Ցուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Ցուցանիշ 1.3	2015		2016		2017		2018		2019	
Երևան	5	1,23%	11	2,51%	5	1,23%	3	1.27%	1	0.45%
Կոտայք	3	0,74%	4	0,91%	3	0,74%	0	0.00%	0	0,00%
Արմավիր	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%	0	0,00%
Գեղարքունիք	5	1,23%	5	1,14%	5	1,23%	10	4.22%	1	0,45%
Շիրակ	0	0,00%	2	0,46%	0	0,00%	0	0.00%	0	0,00%
Արարատ	2	0,49%	3	0,68%	2	0,49%	1	0.42%	0	0.00%
Լոռի	4	0,99%	5	1,14%	4	0,99%	1	0.42%	1	0,45%
Արագածոտն	0	0,00%	0	0,00%	0	0,00%	0	0.00%	0	0,00%
Սյունիք	1	0,25%	0	0,00%	1	0,25%	0	0.00%	0	0.00%
Տավուշ	375	92,59%	411	92,26%	346	92,59%	222	93.67%	217	98,64%
Վայոց ձոր	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%	0	0,00%
Այլ երկրներից	10	2,47%	2	0,46%	10	2,47%	0	0.00%	0	0.00%
Ընդամենը	**405**		**439**		**405**		**237**		**220**	

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2019թ. դիմորդների ընդհանուր թվի գրեթե **98,7%**-ը Տավուշի մարզից են: Տոկոսային ցուցանիշը պայմանավորված է մարզում Երևանի պետական համալսարանի մասնաճյուղն ունենալու և որակյալ կրթություն ապահովելու հանգամանքով, ինչպես նաև տարածաշրջանում պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու և բարձր հեղինակություն ունենալու փաստերով /հիմք՝ Արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները/: Դիմորդների ընդհանուր թվի գրեթե 1,36% Երևան քաղաքից և ՀՀ այլ մարզերից են (Գեղարքունիք, Լոռի): Հայաստանի հանրապետության այլ մարզերից ԵՊՀ ԻՄ դիմորդների տոկոսային ցածր ցուցանիշը պայմանավորված է Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող բուհերի առկայությամբ:





Ցուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

Ցուցանիշ 1.4	2015	2016	2017	2018	2019
Բակալավրիատ	**161**	**196**	**168**	**76**	**166**
Անվճար	38	40	39	39	35
Վճարովի	123	156	129	37	131
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Անվճար	0	0	0	0	0
Վճարովի	0	0	0	0	0

2019թ. ընդունելությամբ, ինչպես նախորդ տարիներին, մասնաճյուղն ունեցել է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ (անվճար) 41 տեղ: Ընդունելության արդյունքներով միասնական քննությունները չհաղթահարելու պատճառով թափուր է մնացել 6 տեղ (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Ռուսաց լեզու և գրականություն, Հոգեբանություն, Բնապահպանություն և բնօգտագործում կրթական ծրագրերով): 2019-20 ուստարվա ընդունելության արդյունքներով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ գրանցվել է ամենացածր ցուցանիշը:

Վճարովի հիմունքներով մասնաճյուղն ունեցել է 404 տեղ, դրանց մեծ մասը մնացել է թափուր՝ պայմանավորված նախ դիմորդների թվաքանակով, ապա նաև ընդունելության քննությունները չհաղթահարելու հանգամանքով:



Յուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Յուցանիշ 1.5	2015	2016	2017	2018	2019
Կենտրոնացված ընդունելության ծավալը	11775	9635	8495	4616	
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	**161**	**196**	**168**	**76**	**166**
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)	**1,37**	**2.03**	**1.98**	**1.65**	

Չնայած 2019 թվականի կենտրոնացված ընդունելության ծավալի վերաբերյալ թիվը չկա, այնուամենայնիվ 2019-2020 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների թիվն ավելացել է նախորդ տարվա համեմատ և կայուն է վերջին 5 տարիների համար։

Յուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Յուցանիշ 1.6	2015	2016	2017	2018	2019
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	208	228	195	103	220
Ընդունվածների թիվը	161	196	168	76	166
Մրցութային ցուցանիշը (բակ.)	**1.29**	**1.16**	**1.16**	**1.36**	**1.33**
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Մրցութային ցուցանիշը (բակ.)	0	0	0	0	0

2019-2020 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մրցութային ցուցանիշը նախորդ ուստարվա համեմատ պահպանվել է և 2015-2017 տարիների համեմատ այն աճել է: Պետքէ նշել, որ մրցութային ցուցանիշը վերջին 5 տարիներին մոտ է 1-ին, ինչը նշանակում է, որ ընդունելության քննություններում մրցակցությունը գրեթե բացակայում է և արդյունքում իջնում է դիմորդների հավաքած միավորների շեմը:





Յուցանիշ 1.7. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.7	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	405	434	370	237	336
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	213	241	210	112	203
Հարաբերությունը (դիմորդներ)	**52,6%**	**55.5%**	**56.8%**	**47.3%**	**60,4%**
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	353	397	338	116	218
ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	188	219	195	74	165
Հարաբերությունը (ընդունվածներ)	**53,3%**	**55.1%**	**57.7%**	**63.8%**	**75,7%**

2019/20 ուստարվա ընդունելության արդյունքներով դիմորդների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմել է **60.4%:** Ընդունվածների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմում է **75.7%,** որը պայմանավորված է միասնական քննությունների պահանջներին իգական սեռի դիմորդների բավարար պատրաստվածությամբ: Իգական սեռի ընդունվածների մասնաբաժինը 2019/20 ուստարվա ընդունելության արդյունքներով նախորդ տարիների համեմատությամբ ամենաբարձրն է. դա նույնպես վկայում է աղջիկների ավելի լավ պատրաստվածության մասին:

Ընդունելության արդյունքներով իգական սեռի բարձր ցուցանիշը պայմանավորված է նաև մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող կրթական ծրագրերի նախընտրությամբ: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերը 2019/20 ուստարում ևս նախընտրել են բացառապես իգական սեռի դիմորդները:





Յուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.8	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	**1**	**0**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**1**	**0**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	1	0	0	0	0
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	**9**	**1**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**9**	**1**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	1	1	0	0	0

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին 3 տարիների ընդունելության արդյունքներով օտարերկրյա դիմորդների թիվը 0 է: Օտարերկրյա ուսանողների համակազմը մեծացնելու համար հարկավոր է ակտիվացնել աշխատանքները այլ երկրներից /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ, իրականացնել հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Արտաքին կապերի բաժինը (*Հիմք՝15.12.2018թ. գիտխորհրդի թիվ 33 նիստի 33/9 որոշում*):



Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.9	2015	2016	2017	2018	2019
Դիմորդների թիվը	197	206	175	134	116
Ընդունվածների թիվը	192	201	170	40	52
Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)	**1,03**	**1,02**	**1.03**	**3.35**	**2.23**

Հեռակա ուսուցման համակարգում 2018 և 2019 ուստարում մրցութային ցուցանիշը եղել է համեմատաբար բարձր: Այն պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմորդների ոչ բավարար պատրաստվածությամբ, քանի որ նրանց գերակշիռ մասը դժվարացել է հաղթահարել գնահատականների նվազագույն շեմը:





Ցուցանիշ 1.10. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

Ցուցանիշ 1.10	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական ուսանողական համակազմը	1693	1685	1580	1433	1213
Բակալավրիատ	**666**	**646**	**630**	**553**	**545**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	333	325	313	273	268
Բնական գիտությունների ֆակուլտետ	88	117	117	107	102
Տնտեսագիտության ֆակուլտետ	161	144	129	111	108
Կիրառական արվեստի ֆակուլտետ	84	60	71	62	67
Օտարերկրյա ուս. համակազմը	7	0	0	0	0
Հեռակա ուսուցում	**1027**	**1039**	**950**	**880**	**668**
Մագիստրատուրա	0	0	0	0	0

2019/20 ուստարում ուսանողական համակազմը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է առկա և հեռակա ուսուցման ձևերում: Իրողությունը պայմանավորված է ՀՀ հանրակրթական համակարգում ներդրված 12-ամյա կրթության իրականացմամբ, որի հետևանքով նվազել է մարզի շրջանավարտների, ինչպես նաև ընդունելության միասնական քննությունների շեմը հաղթահարած դիմորդների ցուցանիշը: Ինչպես փաստում են ներկայացված թվերը, մասնաճյուղի առկա ուսուցման ուսանողների համակազմը գրեթե կայուն է, իսկ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակը վերջին տարիներին բավականին նվազել է՝ ընդունվողների թվաքանակի նվազմամբ պայմանավորված:



Ցուցանիշ 1.11. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.11	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1693	1685	1580	1433	1213
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	**7**	**0**	0	0	0
Բակալավրիատ	7	0	0	0	0
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**0,41**	**0**	**0**	**0**	**0**

Մասնաճյուղը 2016/17, 2017/18, 2018/19, 2019/20 ուստարի-ներին օտարերկրյա ուսանողներ չի ունեցել, ընդհանրապես նրանց թիվը մասնաճյուղում միշտ փոքր է եղել: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Արտաքին կապերի բաժին (*Հիմք՝ 15.12.2018թ. գիտխորհրդի թիվ 33 նիստի 33/9 որոշում*):





Ցուցանիշ 1.12. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.12	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական համակազմը	1531	1693	1580	1433	1213
Հեռակա ուսուցման համակազմը	1004	1027	950	880	668
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**60.7**	**61.7**	**60.1**	**61.4**	**55,1**

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակը 2019/20 ուստարում կազմել է հիմնական ուսանողական համակազմի 55.1%-ը, որը վերջին 5 տարիների ամենացածր ցուցանիշն է: Նախ դա պայմանավորված է և՛ առկա, և՛ հեռակա համակարգում մասնաճյուղ ընդունվածների թվի նվազմամբ: Երկրորդ՝ պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների ցածր պատրաստվածությամբ, որի արդյունքնում նրանց մեծ մասը չի հաղթահարում նվազագույն շեմը (ցուցանիշ 1.9): Ամեն դեպքում, կարևոր է, որ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան երկրորդ մասնագիտություն, կամ բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդներ կան, որոնք ցանկանում են ուսումը համատեղել աշխատանքի հետ:





Ցուցանիշ 1.13. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.13	2015	2016	2017	2018	2019
Ընդունելության ընդհանուր ծավալը	353	397	338	116	218
Բակալավրիատ(առկա, վճարովի)	123	156	129	37	131
Հեռակա ուսուցում	192	201	170	40	52
Մագիստրատուրա (վճարովի)	0	0	0	0	0
Ընդամենը վճարովի	315	357	299	77	183
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	**89.2**	**89.9**	**88.5**	**66.4**	**83,9**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում կազմել է **83. 9%,** որը պայմանավորված է 2019/20 ուստարվա առկա և հեռակա ընդունելության գործընթացներում նախորդ տարվա համեմատությամբ մասնաճյուղ դիմած և ընդունելության քննությունները հաղթահարած դիմորդների թվի աճով: Ընդունելության արդյունքներով թափուր է մնացել վճարովի համակարգով հատկացված տեղերի զգալի մասը:





Ցուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.14	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական համակազմ	**1693**	**1685**	**1580**	**1433**	**1213**
Բակալավրիատ(առկա)	512	494	475	401	393
Հեռակա ուսուցում	1027	1039	950	797	667
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Ընդամենը վճարովի	**1539**	**1533**	**1425**	**1198**	**1060**
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**90,9**	**91.0**	**90.2**	**83.6**	**87,4**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում վերջին 5 տարիների համար կազմում է՝ 84%-91%: Տոկոսային բարձր ցուցանիշը պայմանավորված է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերի սահմանափակ լինելու հանգամանքով, ինչպես նաև ուսանողական համակազմում հեռակա ուսուցման ուսանողների թվական գերակշռությամբ:





Ցուցանիշ 1.15. Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.15	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական համակազմ	1693	1685	1685	1398	1433
Այլ բուհեր տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**5**	**3**	**3**	**0**	**3**
Այդ թվում՝ առկա ուսուցում					2
հեռակա ուսուցում					1
Այլ բուհերից տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**28**	**29**	**33**	**24**	**27**
Այդ թվում՝ առկա ուսուցում	10	12	12	9	1
հեռակա ուսուցում		1	2	3	**9**
ՄՄՈՒՀ-երից տեղափոխված՝ հեռակա ուսուցում	**18**	**16**	**19**	**13**	**17**

Ներկայացված թվերը ցույց են տալիս, որ մասնաճյուղից արտահոսք գրեթե չկա, բայց այլ բուհերից վերջին 5 տարիներին բավականին թվով ուսանողներ են տեղափոխվել մասնաճյուղ: Այդ թվակազմում մեծ թիվ են կազմում (կեսից ավելին) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից՝ քոլեջներից մասնաճյուղ տեղափոխված ուսանողները: Այստեղ իր ազդեցությունն ունեն մասնաճյուղի և մարզի քոլեջների միջև կնքված համագործակցության պայմանագրերը:



ԲՆԱԳԱՎԱՌ 2.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ցուցանիշ 2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
Ցուցանիշ 2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների
Ցուցանիշ 2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
Ցուցանիշ 2.3.1.	Դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)
Ցուցանիշ 2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
Ցուցանիշ 2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
Ցուցանիշ 2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
Ցուցանիշ 2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
Ցուցանիշ 2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
Ցուցանիշ 2.9.	Իրական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
Ցուցանիշ 2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
Ցուցանիշ 2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
Ցուցանիշ 2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
Ցուցանիշ 2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
Ցուցանիշ 2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.16.	Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Յուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

Յուցանիշ 2.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Բակալավրի ծրագրեր (%)	100	97,8	99,5	100.0	100
Մագիստրոսական ծրագրեր (%)	-	-	0.0	0.0	0

Առկա ուսուցման համակարգում նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ. 2019-2020 ուստարում առաջինից երկրորդ կուրս է փոխադրվել ուսանողների 100%-ը:

2014թ.-ից մագիստրոսական կրթական ծրագրով մասնաճյուղում ընդունելություն չի կատարվել:

Յուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ 2.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	350	416	271	348	354
Մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների թիվը	4	0	0	0	0
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	0	0	0	0	0

2019-2020 ուստարում ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել են թվով 354 ուսանողներ (166-ը՝ առկա ուսուցման համակարգում, 188-ը՝ հեռակա ուսուցման համակարգում, այդ թվում՝ 6-ը նախորդ ուստարիներից), 154 շրջանավարտներ ավարտել են հումանիտար գիտությունների ֆակուլտետը, 81-ը՝ բնական գիտությունների, 98-ը՝ տնտեսագիտության և 15-ը՝ կիրառական արվեստի ֆակուլտետները: Նախորդ տարվա համեմատությամբ 2019-2020 ուստարում բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետներն ունեցել են ավելի շատ շրջանավարտներ, որը պայմանավորված է 2015-16 ուստարում այդ ֆակուլտետներ ընդունված ուսանողների քանակի ավելացմամբ:



Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Ցուցանիշ 2.3	2015/16		2016/17		2017/18		2018/19		2019/20	
Պրոֆեսոր	3	**3.1%**	3	**3.2%**	3	**3.1%**	4	**4.3%**	5	**6,1%**
Դոցենտ	28	**28.9%**	25	**26.6%**	28	**29.9%**	30	**32.3%**	28	**34,1%**
Ասիստենտ և դասախոս	66	**68.0%**	66	**70.2%**	66	**67.0%**	59	**63.4%**	49	**59,8%**
Ընդամենը	**97**		**94**		**97**		**93**		**82**	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	45	**46.4%**	38	**40.4%**	45	**54.6%**	46	**49.5%**	42	**51,2%**

Հիմնական դասախոսական կազմը վերջին 5 տարիների համար կայուն է՝ 93-ից 97: Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 3 ուսումնական տարիներին աճել է և կազմում է դասախոսական կազմի 50-ից 55%-ը, որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորա-դասախոսական կազմի համալրմամբ:



Ցուցանիշ 2.3.1. Հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)

Ցուցանիշ 2.3.1	2017/18		2018/19		2019/20	
Պրոֆեսոր	0	0.0%	0	0.0%	1	1,6%
Դոցենտ	14	20.6%	16	22.5%	17	26,6%
Ասիստենտ և դասախոս	54	79.4%	55	77.5%	46	71,9%
Ընդամենը	**68**		**71**		**64**	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	**30**	**44.1%**	**26**	**36.6%**	**26**	**40,6%**
Միայն ԵՊՀ ԻՄ-ում ուսումնագի-տական գործունեություն ծավալող դասախոսների թիվը	17	25.0%		0.0%		0.0%
Այդ թվում՝ պետական համակարգի ղեկավար կազմի աշխատակից	13	19.1%	11	15.5%	9	14,1%
Այդ թվում՝ մասնավոր ոլորտի ղեկավար կազմի աշխատակից	0	0.0%	0	0.0%	0	0.0%

2019-20 ուսուստարում մասնաճյուղի հիմնական աշխատող դասախոսները (**64** դասախոս) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի (**182,** ցուցանիշ 2.4) **35%**-ը: Ընդ որում, նրանց գրեթե **41%**-ը գիտական աստիճանով է և նրանցում մեծ թիվ են կազմում մասնաճյուղի նախկին շրջանավարտները:

Յուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Յուցանիշ 2.4	2015/16		2016/17		2017/18		2018/19		2019/20	
Հիմնական և համատեղութ.	120	**81.6%**	126	**79.7%**	**118**	**71.5%**	**129**	**74.6%**	**117**	**64,3%**
Ժամավճար	27	**18.4%**	32	**20.3%**	**47**	**28.5%**	**44**	**25.4%**	**65**	**35,7%**
Ընդամենը	**147**		**158**		**165**		**173**		**182**	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 5 տարիների համար հիմնականում կայուն է՝ 110-130 դասախոս: Այն 2014-15թթ. նվազել էր առկա ուսուցման ձևում մեկ կուրս չլինելու պատճառով, որն անդրադարձել էր ամբիոնային ծանրաբեռնվածությունների նվազման վրա:

Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ: Այն արտահայտվել է ժամավճարով աշխատող դասախոսների քանակի ավելացման վրա. վերջին 3 ուստարիներին այդ թիվն աճել է:



Յուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Յուցանիշ 2.5	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Դասախոսական կազմի համալրումը	3	0	-2	-2	-11
Աշխատանքի ընդունված դասախոսների թիվը					
Հիմնական դասախոսական կազմ	97	97	95	93	82





Յուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

Յուցանիշ 2.6	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ընդհանուր դասախոսական կազմ	120	126	118	129	117
Հաստիքներ	86.5	84	77.75	77.25	65.25
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	**0.72**	**0.67**	**0.66**	**0.60**	**0.56**

Վերջին հինգ տարիների ընթացքում հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ 0,56-0,72: Դա պայմանավորված է բեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ և դասա-վանդողների նեղ մասնագիտացմամբ:





Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

Ցուցանիշ 2.7	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ընդամենը՝ հիմնական դասա-խոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)	97	97	95	93	82
Մինչև 35 տարեկան	21	17	17	64	16
35-65 տարեկան	68	69	67	7	57
65-ից բարձր	8	11	11	93	9
Միջին տարիք	**48.0**	**49.1**	**49.1**	**47.6**	**48,7**
Ընդամենը՝ հիմնական դասա-խոսական կազմը (առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)			68	71	64
Մինչև 35 տարեկան			14	19	14
35-65 տարեկան			50	47	44
65-ից բարձր			4	5	6
Միջին տարիք			**47.8**	**47.0**	**48.1**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմը կայուն է: Պահպանվել են դասախոսական կազմում տարիքային բաշխման մասնաբաժինները, և միջին տարիքը կազմում է 48-49, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է: Իսկ հիմնական դասախոսական կազմի միջին տարիքը 2019-20 ուստարում եղել է 48:



Յուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Յուցանիշ 2.8	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Մասնագիտական	2			2	0
Մանկավարժական	1			38	98
Համակարգչային				26	48
Այլ				29	12
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	***3***	***0***	***0***	***95***	***158***

2011-16թթ. մասնաճյուղում իրականացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում հաստատված Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի շրջանակներում մասնագիտական, մանկավարժական և համակարգչային համապատասխան դասընթացներով որակավորման բարձրացում են անցել մասնաճյուղի դասախոսական կազմի 90-95%-ը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է նոր կրթագիտական ծրագիրը՝ 2017-2021 թթ., որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը: Այդ ծրագրի շրջանակներում 2018-19 ուստարում իրականացվել են բավականին վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես մասնաճյուղում առաջին անգամ իրականացվել են անգլերեն լեզվի վերապատրաստումներ /որը ծրագրի պարտադիր պահանջներից է/: Անգլերենը ակադեմիական միջավայրում դասընթացին մասնակցել են 29 դասախոս: Կազմակերպվել են դասախոսների մանկավարժական հմտությունների զարգացման և կատարելագործման ուղղությամբ մի շարք դասընթացներ, որոնց միջինում մասնակցել են 38 դասախոս: Վերապատրաստումներ են իրականացվել նաև դասախոսների ՏՀՏ օգտագործման և առցանց ուսումնառության հարթակների օգտագործման հմտությունների զարգացման ուղղությամբ /Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում- Moodle/:



Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Ցուցանիշ 2.9	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական դասախոսական կազմ	97	97	95	93	82
Իգական սեռի դասախոսներ	43	51	52	55	46
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	**44.3**	**52.6**	**54.7**	**59.1**	**56.1**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի մասնաբաժինը հիմնականում կազմում է ավելի քան 50%, որը պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով, և մասնաճյուղի համար կարելի է համարել լավ ցուցանիշ է:





Յուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Յուցանիշ 2.10	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ուսանողներ	1693	1685	1580	1433	1213
Դասախոսական հաստիքներ	86.5	84	77.75	77.25	65.25
Ուսանող/դասախոս հարաբերությունը	**19.57**	**20.06**	**20.32**	**18.55**	**18.59**

Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ 19-20, պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:

Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին:





Յուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Յուցանիշ 2.11	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ուսանողներ	1693	1685	1580	1433	1213
Ուսումնաօժանդակ կազմ	25	24	27	16	19
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	**67.72**	**70.21**	**58.52**	**89.56**	**63,84**

Համաձայն մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի վերջին 2 ուստարիներին մասնաճյուղում կատարվել է ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացում՝ պայմանավորված նաև ուսանողների թվի նվազմամբ: Դրա արդյունքում ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը մեծացել է:





Ցուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Ցուցանիշ 2.12	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	825,9	929,1	730.85	755.2	715,3
Բնական գիտությունների ֆակուլտետ	761,9	968,3	802.6	766.5	721,2
Տնտեսագիտության ֆակուլտետ	885,6	886,1	903.1	769.6	736,6
Կիրառական արվեստի ֆակուլտետ	730,4	675,2	651.05	716.9	735,95
Համահամալսարանական ամբիոններ	875,6	763,2	722.7	720.6	712,6
Համահամալսարանական միջինը	**815,9**	**844,4**	**762.1**	**745.8**	**724.3**

Դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն կազմում է ոչ պակաս 700 ժամ: 2019/20 ուստարում մասնաճյուղում դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը գտնվում է սահմանված նորմատիվի շրջանակներում:



Յուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Յուցանիշ 2.13	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը	16	7	1	10	1
Գիտամեթոդական ձեռնարկների թիվը					
Հիմնական դասախոսական կազմը	97	97	95	93	82
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.16**	**0.07**	**0.01**	**0.11**	**0.01**

Մասնաճյուղի դասախոսական կազմի կողմից հրատարակած ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի թիվը վերջին 3 տարիների համար փոքր թվեր են, որովհետև դրանց մեջ ներառված է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի ցուցանիշը՝ առանց ԵՊՀ-ից հրավիրված դասախոսական կազմի: Այս ցուցանիշը հույս ունենք կբարձրանա 2020-21 ուստարում դասախոսների գիտական գործունեության խրախուսման համար մտցված լրավճարների և բացված «Տավուշ» հետազոտական կենտրոնի գործունեության շնորհիվ:





Յուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.14	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	88,4	87.0	89.0	81.7	74,5
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	76,6	77.1	62.7	62.1	48,7
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	76,5	72.4	67.3	64.1	66,5
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	78	93.1	83.3	87.5	77,8
Միջին տարեկան ցուցանիշը(%)	79,9	82.4	75.6	73.8	66,9

2019-2020 ուստարում գրանցված առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը նախորդ ուստարիների համեմատ նվազել է և մասնաճյուղում կազմել է 67%, այսինքն յուրաքանչյուր 3 ուսանողից 1-ը չի հաղթահարել քննաշրջանները: Դա պայմանավորված է 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակում ուսումնական և քննական գործընթացների առցանց կազմակերպման առանձնահատկություններով: Այն առանձնապես իր ազդեցությունն է թողել որոշ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման վրա, մասնավորապես բնական գիտությունների ֆակուլտետում:



Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.15	2015/16		2016/17		2017/18		2018/19		2019/20	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4,58	4,63	4,68	4.62	4.59	4.33	4.60	4.71	4,70	4,70
Բնական գիտությունների ֆակուլտետ	4,56	4,62	4,40	4.49	4.48	4.34	4.25	4.64	4,58	4,58
Տնտեսագիտական ֆակուլտետ	4,66	4,78	4,81	4.76	4.67	4.66	4.64	4.71	4,76	4,71
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4,76	4,86	4,81	4.77	4.69	4.48	4.52	4.44	4,66	-
Համահամալսարանական ամբիոններ	4,56	4,56	4,54	4.55	4.78	4.62	4.60	4.59	4,72	4,75

Ուսանողների կողմից դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթիկում հարցերը գնահատվում են 5-միավորանոց սանդղակով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից, վարչական և ուսումնաօժանդակ ծառայություններից: 2019/20 ուստարվա երկրորդ կիսամյակի հարցման արդյունքներով ամենաբարձր միավորը գրանցվել է տնտեսագիտության ֆակուլտետում, համահամալսարանական ամբիոնում և հումանիտար գիտությունների ֆակուլտետում:



Ցուցանիշ 2.16. Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Ցուցանիշ 2.14	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Բակալավրիատի ուսանողների թիվը, այդ թվում.		**652**	**638**	**584**	**536**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ		349	327	302	268
Բնական գիտությունների ֆակուլտետ		85	103	108	103
Տնտեսագիտության ֆակուլտետ		151	145	111	105
Կիրառական արվեստի ֆակուլտետ		67	63	63	60
85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը, այդ թվում.		**192**	**176**	**113**	**127**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ		115	102	63	72
Բնական գիտությունների ֆակուլտետ		16	20	17	15
Տնտեսագիտության ֆակուլտետ		42	38	19	24
Կիրառական արվեստի ֆակուլտետ		19	16	14	16
ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թիվը (առնվազն 5%)		**318**	**275**	**334**	**270**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ		161	134	181	128
Բնական գիտությունների ֆակուլտետ		44	50	62	59
Տնտեսագիտության ֆակուլտետ		75	69	61	59
Կիրառական արվեստի ֆակուլտետ		38	22	30	24
ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների թիվը (առնվազն 5%)		**142**	**187**	**137**	**124**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ		73	91	58	73
Բնական գիտությունների ֆակուլտետ		25	33	29	20
Տնտեսագիտության ֆակուլտետ		34	38	31	13
Կիրառական արվեստի ֆակուլտետ		10	25	19	18

2019/20 ուստարում 85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը կազմում է ընդհանուր ուսանողների թվի **23.7%**-ը և բարձր է նախորդ ուստարվա ցուցանիշից, ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թիվը կազմում է **50.4%**-ը, իսկ ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների թիվը՝ **23.1%**-ը: Նախորդ տարվա համեմատությամբ ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թվով ցուցանիշը բարձրացել է:



ԲՆԱԳԱՎԱՌ 3.

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Յուցանիշ 3.1.	Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող
Յուցանիշ 3.2.	Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.3.	Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)
Յուցանիշ 3.4.	Տարեկան բյուջեն (տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հազար դրամ)
Յուցանիշ 3.5.	Օպերատիվ բյուջեն (ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հազար դրամ)
Յուցանիշ 3.6.	Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հազար դրամ)
Յուցանիշ 3.7.	Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հազար դրամ)
Յուցանիշ 3.8.	Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 3.9.	Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հազար դրամ)
Յուցանիշ 3.10.	Ուսման միջին վարձաչափը (հազար դրամ)
Յուցանիշ 3.11.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին
Յուցանիշ 3.12.	Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.13.	Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.14.	Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.15.	Հարկերի ծավալ/փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող-աշխատող հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Աշխատողների ընդհանուր թիվը	226	245	243	264	269
Ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	**7.5**	**6.9**	**6.5**	**5.4**	**4.5**

2015-16, 2016-17 և 2017-18 ուստարիներին ուսանողների թվի աճին զուգահեռ ավելացել է նաև մասնաճյուղի աշխատակիցների ընդհանուր թիվը, որի արդյունքում ուսանող-աշխատող հարաբերակցությունը կազմել է **6.5-7.5**: 2019-20 և վերջին երեք ուստարիներին հարաբերակցությունը նվազել է ուսանողների թվաքանակի նվազման և աշախատակազմի թվաքանակի ավելացման պատճառով: Աշխատակիցների թվաքանակն ավելացել է հիմնականում ժամավճարով ներգրավված և նեղ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսների թվաքանակի ավելացման հաշվին:





Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Դասախոսական կազմը	120	126	118	129	117
Ուսումնաօժադակ և վարչական կազմ	76	81	83	94	100
Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը	**1.58**	**1.56**	**1.42**	**1.37**	**1.17**

«Տավուշ» հետազոտական կենտրոնը:

Նախորդ տարիների հետ համեմատած 2019-20 ուստարում հարաբերակցությունը նվազել է: Ինչը պայմանավորված է դասախոսական կազմի նվազման և զուգահեռ ուսումնաօժանդակ և վարչական կազմի աճով, որը պայմանավորված է մասնաճյուղում նոր բաժինների բացմամբ, դրանք են «Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման» բաժինը,





Յուցանիշ 3.3. Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)

Յուցանիշ 3.3	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Դասախոսական կազմում (%)	4.24	1.96	1.05	1.05	0,89
Ընդհանուրում (%)	6.8	0.97	0.97	0.97	0,97

Աշխատողների հոսունության ցուցանիշները պայմանավորված են ժամավճարային հիմունքներով դասավանդողների բաժնեմասով և Երևանից հրավիրված այն մասնագետների փոփոխությամբ, որոնք չեն հարմարվում երկար ճանապարհին: Սակայն վերջին տարիներին ցուցանիշի նվազման միտում է նկատվում, ինչը վկայում է աշխատողների կայունության մասին:



Յուցանիշ 3.4. Տարեկան բյուջեն
(տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հզ. դր.)

Յուցանիշ 3.4	2015	2016	2017	2018	2019
Դրամական միջոցները տարեսկզբին	272955	128810	217100	234167	304530
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	348714	379585	379359	338877	312285
Եկամուտներ պետական բյուջեից	97641	116979	120180	144036	137940
Այլ եկամուտներ	27146	26065	38256	40432	46723
Ընդամենը տարեկան եկամուտներ	**473501**	**522629**	**537795**	**523345**	**496948**
Տարեկան բյուջեն	**746456**	**651439**	**754895**	**757512**	**801478**

Վերջին տարիներին մասնաճյուղի եկամուտները վճարովի ուսուցման ծառայությունից առանձնապես չեն ավելացել, նույնիսկ 2018 և 2019թ. -ին նվազել են, որը հիմնականում պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թվի նվազմամբ:

Այլ եկամուտների մասով իրականացվում են բազմաբնույթ քայլեր, որի արդյունքում գրանցվել է եկամուտների աճ: 2019թ-ին մասնաճյուղի տարեկան բյուջեն 2016թ. -ի համեմատ աճել է **23%**-ով, որի մեջ իր ազդեցությունն ունեն նախորդ տարվանից փոխանցված և ավելացած դրամական միջոցները և պետական բյուջեի աճը, որը 2019թ.-ին կազմել է մասնաճյուղի տարեկան բյուջեի **17.2%-ը** և պակաս է նախորդ տարիների համեմատ: 2019թ.-ին ընդհանուր տարեկան եկամուտները 2016թ.-ի համեմատ նվազել են **4.9 %**-ով: Պետք է նկատել, որ պետական բյուջեից եկամուտների հաշվեկշիռը տարեկան եկամուտներում վերջին 5 տարիներին աճել է, ինչը պայմանավորված է վճարովի ուսուցման ծառայություններից եկամուտների ծավալի նվազմամբ:







Ցուցանիշ 3.5. Օպերատիվ բյուջեն
(ծախսերի ծավալ-ուսանող և մուտքերի ծավալ-ուսանող հարաբերակցությունները, հզ. դր.)

Ցուցանիշ 3.5	2015	2016	2017	2018	2019
Ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Եկամուտների ծավալ	746456	651439	754895	757512	801478
Եկամուտների ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**440.9**	**386.6**	**477.8**	**528.6**	**660,7**
Ծախսերի ծավալ	417723	435513	428818	454089	470530
Ծախսերի ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**246.7**	**258.5**	**271.4**	**316.9**	**387,9**

2019թ. -ին մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը նախորդ տարիների համեմատ ավելացել է, որը պայմանավորված է ուսանողների ընդհանուր թվի նվազմամբ և եկամուտների ծավալի ավելացմամբ: Ավելացել է նաև մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը, ինչը կապված է իրականացված տեխնիկական վերազինման և գրականության ձեռքբերման ծախսերի հետ՝ լսարանները տեխնիկապես հագեցվել են և համակարգչային սրահները համալրվել, կատարվել է ուսումնական տարածքի վերանորոգում:





Յուցանիշ 3.6. Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հզ. դր.)

Յուցանիշ 3.6	2015	2016	2017	2018	2019
Տարեվերջից տեղափոխվող մնացորդը	128 810	217 100	234167	304530	60949

2019թ.-ի տարեվերջից հաջորդ տարի տեղափոխվող մնացորդը նվազել է:





Ցուցանիշ 3.7. Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.7	2015	2016	2017	2018	2019
Ընդամենը տարեկան եկամուտներ	473501	522629	537795	523345	496948
Արտաբյուջետային մուտքեր, այդ թվում՝	**375860**	**405650**	**417614**	**379309**	**359007**
Վճարովի ուսուցման ծառայությունից	348714	379585	379359	338877	312285
Բարեգործական եկամուտներ	640	461	914	0	0
Առևտրային բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող %-ներից եկամուտներ	21500	21888	32999	35900	41323
Այլ եկամուտներ	5006	3716	4342	4532	5399
Տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտներում (%)	**79.4**	**77.6**	**77.7**	**72.5**	**72,2**

Վերջին տարիներին արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր տարեկան եկամուտների մեջ նվազում է: Այն 2019թ. -ին կազմել է ընդամենը **72,2%:** Վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտների հաշվեկշիռը արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալում 2019թ-ին կազմել է **87,0%,** և ընդհանրապես այն նվազում է ուսանողների թվի նվազման պատճառով: Բարեգործական և այլ եկամուտները կայուն չեն, իսկ դրամաշնորհներ և լրացուցիչ կրթական դասընթացներ չունենալու պատճառով մուտքերը 0-ական են:



Ցուցանիշ 3.8. Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.8	2015	2016	2017	2018	2019
Տարեկան ընդհանուր ծախսեր	417723	435513	428818	454089	470530
Ուսումնական ծախսեր	200500	210400	205800	220900	230500
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**48.0**	**48.3**	**48.0**	**48.6**	**49,0**
Գիտահետազոտական աշխատանքներին տրվող ծախսեր					

2019թ. -ին 2015թ. -ի համեմատ ուսումնական ծախսերն աճել են 15%-ով: Տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը վերջին 4 տարիների համար մեծացել է, սակայն այն համեմատաբար կայուն է և գտնվում է **48%-49,0%** միջակայքում: 2019թ.-ին մեկ ուսանողին ընկնող ծախսերը ավելացել են, որը պայմանավորված է ուսանողների թվի նվազմամբ, և կազմում են մեկ ուսանողին ընկնող ընդհանուր ծախսերի կեսը (ցուցանիշ 3.5):





Յուցանիշ 3.9. Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր)

Յուցանիշ 3.9	2015	2016	2017	2018	2019
Տարեկան ընդհանուր ծախսեր	417723	435513	428818	454089	470530
Ուսումնաօժանդակ ծախսեր	42700	48300	47600	52220	53200
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	**10.2**	**11.1**	**11.1**	**11.5**	**11.3**

2019թ. -ին ուսումնաօժանդական ծախսերը 2015թ. -ի համեմատ աճել են **24.6%**-ով, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են գրեթե **2%**-ով: Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը 2016-2019 տարիների համար համեմատաբար կայուն է և կազմում է 11%-11,3%, որը հիմնավորում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությունը:





Ցուցանիշ 3.10. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)

Ցուցանիշ 3.10	2015	2016	2017	2018	2019
ՀՀ քաղաքացիների համար միջին վարձաչափը	300	320	320	320	320

Ուսման միջին վարձաչափը վերջին 4 տարիներին մնացել է նույնը:



Յուցանիշ 3.11. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին

Յուցանիշ 3.11	2015	2016	2017	2018	2019
Պրոֆեսոր	167327	167327	167327	222416	222416
Դոցենտ	160052	160052	160052	184060	191000
Ասիստենտ և դասախոս	152777	152777	152777	184060	184060
Դասախոսական միջին աշխատավարձը	161871	161871	161871	175694	177000
ՀՀ միջին աշխատավարձը	171615	174445	177817	180000	183030
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	**0.94**	**0.93**	**0.91**	**0.98**	**0.97**

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին 2015թ.-ից հետո նվազել էր, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ հայաստանյան պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով: Այն 2018թ.-ին աճել է և մոտեցել է հայաստանյան պաշտոնական միջինին:





Ցուցանիշ 3.12. Աշխատավարձ և եկամտային հարկ-ծախսեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.12	2015	2016	2017	2018	2019
Աշխատանքի վարձատրության ծախսեր (հզ.դր.)	257686	267613	269447	278917	313826
Եկամտային հարկ (հզ. դր.)	84864	91461	88813	90517	110738
Ընդամենը աշխատավարձի և սոց. վճարների ծախսեր (հզ. դր.)	342550	359074	358260	369434	424565
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ. դր.)	417723	435513	428818	454089	470530
Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ /ծախսեր հարաբերակցությունը	**0.82**	**0.82**	**0.84**	**0.81**	**0,90**

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ **81%-90%,** (ինչը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, կազմակերպա-իրավական ձևով), ընդ որում՝ այդ ցուցանիշը վերջին տարիներին թեպետ քիչ, բայց աճել է, ինչը հիմնավորվում է հարկային համապատասխան օրենքների փոփոխություն-ներով (եկամտային հարկի) և աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմամբ:





Ցուցանիշ 3.13. Արտաբյուջետային մուտքեր-բյուջետային մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.13	2015	2016	2017	2018	2019
Արտաբյուջետային մուտքեր (հզ. դր.)	375860	405650	417614	379309	359007
Պետական բյուջեից ստացվող մուտքեր (հզ. դր.)	97641	116979	120180	144036	137940
Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը	**3.8**	**3.5**	**3.5**	**2.6**	**2.6**

2015-2017թթ. այս ցուցանիշի աճը (3.5) պայմանավորված է պետական բյուջեից մուտքերի նվազմամբ՝ պայմանավորված աշխատակազմի թվի նվազմամբ (մեկ կուրս չունենալու պատճառով) և արտաբյուջետային մուտքերի աճով՝ պայմանավորված վճարովի տեղերի թվի ավելացմամբ, այլ եկամուտների ձևավորմամբ: 2018թ.-ին այդ ցուցանիշը է նվազել պետական բյուջեից մուտքերի ծավալի մեծացման հաշվին:





Յուցանիշ 3.14. Ծախսերի ծավալ-բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը

Յուցանիշ 3.14	2015	2016	2017	2018	2019
Բյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	97641	116979	120180	144036	137940
Արտաբյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	320082	318534	308638	310053	332590
Ծախսերի ընդհանուր ծավալ (հզ. դր.)	417723	435513	428818	454089	470530
Ծախսերի ծավալ/ բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը	**4.28**	**3.72**	**3.57**	**3.15**	**3,41**

Ծախսերի ընդհանուր ծավալ և բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը 2015թ.-ի համեմատ նվազել է, պայմանավորված արտաբյուջետային ծախսերի աննշան փոփոխությամբ, սակայն բյուջետային ծախսերի ծավալի ավելացմամբ՝ պայմանավորված պետական բյուջեից ստացվող մուտքերի ավելացմամբ:





Ցուցանիշ 3.15. Հարկերի ծավալ - փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.16	2015	2016	2017	2018	2019
ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկեր (հզ. դր.)	84864	102926	111496	107171	111322
Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ ֆինանսավորման չափը (հզ. դր.)	97641	116979	120180	144036	137940
Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը	**0.87**	**0.88**	**0.93**	**0.74**	**0.81**

Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսավորման ծավալները վերջին տարիներին անընդհատ աճել են: Մինչև 2018թ. -ը աճել են նաև մասնաճյուղի կողմից պետական բյուջե վճարվող հարկերը, կախված աշխատողների թվի աճի հետ: Եվ հարկերի ծավալ փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը 2015-2019թթ. համար եղել է համեմատաբար կայուն՝ 0.87-0.93, այսինքն հարկերի ծավալը գրեթե հավասար է եղել պետական ֆինանսավորման չափին, այսինքն պետական գումարները վերադարձվել են պետությանը: 2018թ. -ին այդ հարաբերակցությունը նվազել է հարկային քաղաքականության փոփոխման պատճառով, որովհետև վճարվող հարկերի ծավալը նվազել է, իսկ պետական բյուջեից եկամուտները աճել են:





ԲՆԱԳԱՎԱՌ 4.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Յուցանիշ 4.1.	Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը
Յուցանիշ 4.2.	Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը
Յուցանիշ 4.3.	Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը
Յուցանիշ 4.4.	Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում
Յուցանիշ 4.5.	Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը
Յուցանիշ 4.6.	Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին
Յուցանիշ 4.7.	Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի համագումարում
Յուցանիշ 4.8.	Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը
Յուցանիշ 4.9.	Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը
Յուցանիշ 4.10.	Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.1. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Յուցանիշ 4.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տարածքը /մ ²/	13195	13195	13195	13195	13195
Ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը /մ²/	**7.8**	**7.8**	**8.4**	**9.2**	**10,9**

Մեկ ուսանողին ընկող ընդհանուր տարածքի տատանումը պայմանավորված է ուսանողների թվաքանակի փոփոխությամբ: Վերջին երկու տարիներին մեկ ուսանողին ընկող ընդհանուր տարածքի աճը կապված է ուսանողների քանակի նվազմամբ: Ուսանողների քանակի նվազումը պայմանավորված է դիմորդների քանակի նվազմամբ:



Յուցանիշ 4.2. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Յուցանիշ 4.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ուսումնական տարածքը /մ²/	8400	8400	8400	8400	8400
Ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը /մ²/	**4.96**	**4.99**	**5.32**	**5.86**	**6.92**

2015 թվականից մեկ ուսանողին ընկնող լսարանային տարածքը աճել է, ինչը պայմանավորված է ուսանողների քանակի նվազմամբ և ակադեմիական խմբերի ամբողջացումով: Մեկ ուսանողին ընկնող լսարանային տարածքի տատանումը պայմանավորված է նաև առկա և հեռակա ուսուցման դասընթացների լսարանային համատեղությամբ: Ընդհանուր առմամբ մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը 2019/20 ուստարում նախորդ ուստարվա համեմատ ավելացել է 1 միավորով:



Յուցանիշ 4.3. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը

Յուցանիշ 4.3	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ակադեմիական խմբերի թիվը (միջինը՝ 36 ուսանող խմբում)	74	82	75	75	72
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	53	56	56	56	56
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	**0.8**	**0.7**	**0.7**	**0.7**	**0.8**

2016-2017 թվականին լսարանային ֆոնդի աճը պայմանավորված է ակադեմիական խմբերի աճով: 2016-2017 ուսումնական տարում մասնաճյուղում իրականացվել են նոր կրթական ծրագրեր, որից ելնելով նաև ավելացել են ակադեմիական խմբերը և ստեղծվել են նոր լսարաններ: 2017թ. -ից ակադեմիական խմբերը նվազել են ուսանողների քանակի նվազմամբ և որոշակի ակադեմիական խմբերի միավորումով պայմանավորված: Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակի մեկից փոքր լինելը պայմանավորված է առկա և հեռակա ուսուցման ընթացքում լսարանների համատեղմամբ (այսինքն երկհերթ ուսումնառության կազմակերպմամբ):



Ցուցանիշ 4.4. Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում

Ցուցանիշ 4.4	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Գրքերի թիվը	14235	14559	14908	18062	19237
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	**8.4**	**8.6**	**9.4**	**12.6**	**15.9**

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշն անհրաժեշտ է անընդհատ բարելավել: Զուգահեռ ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսություն-ների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով:

2017 թվականի դեկտեմբերից գործարկվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանը **ijevanlib.ysu.am** հասցեով, որտեղ ազատ և մատչելի տարբերակով առաջարկվում է օգտվել մոտ 950 էլեկտրոնային գրքերից (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն):

2019-20 ուստարում մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվն աճել է հիմնականում ուսանողների ընդհանուր թվի նվազման և նաև գրքերի թվի աճի պատճառով:





Յուցանիշ 4.5. Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը

Յուցանիշ 4.5	2015	2016	2017	2018	2019
Նոր գրքերի տարեկան թիվը	909	709	1349	644	238
Նոր ամսագրերի տարեկան թիվը	374	50	354	225	17
Բաժանորդագրված տպագիր և էլեկտրոնային մասնագիտական ամսագրերի թիվը					
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դր.)	**848**	**279**	**707**	**426**	**432**
Մասնագիտական գրականության հայերեն թարգմանությունների համար հատկացված գումարը					
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	**500.9**	**165.6**	**447.5**	**297.3**	**356,1**

Թեև նոր գրքերի և ամսագրերի թիվն անընդատ աճում է, սակայն գրականություն ձեռք բերելու համար տարեկան ծախսերը փոփոխական են՝ պայմանավորված վերջին տարվա կորոնաիրականությամբ, գրականության նկատմամբ ունեցած պահանջով, հրատարակված նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությամբ, մասնագիտական գրքերի բարձր գներով, ինչպես նաև նոր մասնագիտությունների համար անհրաժեշտ գրականության բացակայությամբ կամ սակավ առկայությամբ:

Ուսանողներն ու ամբիոնները հնարավորություն ունեն ներկայացնելու պահանջագրեր և անհրաժեշտ գրականության ցանկեր, ըստ որոնց և իրականացվում է գրքերի ձեռքբերումը: Հատկապես մեծ պահանջարկ ունեն արտասահմանյան գրականության առանձին հեղինակների աշխատությունները, որին նպաստում է նաև տվյալ գրքերի գովազդը տարբեր համացանցային սոցիալական կայքերում: Հատկապես ակտիվ է գրադարանի ֆեյսբուքյան էջն ու խումբը, որոնք ունեն ավելի քան 8000 համացանցային հետևորդ:





Յուցանիշ 4.6. Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և դասախոսների թվին

Յուցանիշ 4.6	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Նոր աբոնենտների թիվը	265	254	242	211	197
Ընդհանուր աբոնենտների /ընթերցողների / թիվը	1272	1034	1014	972	904
ԵՊՀ ԻՄ դասախոսների և ուսանողների թիվը	1813	1811	1698	1562	1329
Տարեկան աբոնենտներ /դասախոսներ և ուսանողներ հարաբերությունը	0.70	0.57	0.60	0.62	0.68

2015-19թթ. ընթացքում գրադարանի տարեկան աբոնենտների հաշվեկշիռը դասախոսների և ուսանողների թվի մեջ համեմատաբար կայուն է՝ 60%-80%, որը պայմանավորված է ինչպես գրադարանային ֆոնդի հարստացմամբ և արդիականացմամբ, այպես էլ համացանցին միացված համակարգիչների տեղադրմամբ:

Գրադարանի նոր աբոնենտների միջին թիվը վերջին 5 տարիների համար 233 է: Նոր աբոնենտների թվի նվազումը պայմանավորված է շրջանավարտների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակների տարբերությամբ, նաև դասախոսական կազմի կայունությամբ: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն ու հաճախ օգտվում են ԵՊՀ-ի՝ անհամեմատ հարուստ գրադարանային պաշարներից, տանը ունեն համակարգիչներ և ինտերնետային կապ, որը հնարավորություն է տալիս օգտվել էլեկտրոնային տարբեր գրադարաններից, այդ թվում նաև մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարներից: Ուսանողներին հիմնականում բավարարում են նաև դասախոսների տրամադրած էլեկտրոնային նյութերը: Ուղղակի դասախոսները պետք է ավելացնեն ինքնուրույն և հետազոտական աշխատանքների շրջանակում նոր գրականության ցանկը:

Հատկապես կարևորենք ամբիոնային պահանջագրերի դերը, որը հնարավորություն է ընձեռում նկատել գրադարանում առկա կամ ձեռքբերման պահանջարկ ունեցող գրականությունը, իրականացնել մասնագիտական գրականության պաշարների՝ ուսանող/ գիրք հարաբերության հնարավոր համահարթեցում:

Հատկապես մեծ է էլեկտրոնային գրադարանի պահանջարկը, իսկ մեր էլեկտրոնային գրադարանի այցելությունների թիվը միջինում 4000 դիտում է (ամբողջական դիտումները մոտ 6,875,000 էջ՝ 01.10.2020 թվականի դրությամբ):



Յուցանիշ 4.7. Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ-ի ծախսերի հանրագումարում

Յուցանիշ 4.7	2015	2016	2017	2018	2019
Շահագործման ծախսերի ծավալը (հզ. դր.)	125500	130600	132125	127145	141900
Ընդհանուր ծախսերի ծավալը (հզ. դր.)	417723	435513	428818	454089	470530
Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը (%)	**30.04**	**29.99**	**30.81**	**28.00**	**30,16**

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում համեմատաբար կայուն է:







Յուցանիշ 4.8. Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը

Յուցանիշ 4.8	2015	2016	2017	2018	2019
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	4699	4750	5242	7526	1312
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1693	1685	1580	1433	1213
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	2.78	2.82	3.32	5.25	1,08

2016-2018թթ. ձեռքբերված սարքավորումների ծախսերը աճել են, ինչը պայմանավորված է մասնաճյուղին անհրաժեշտ սարքավորումներով համալրելու հանգամանքով: Այսինքն, վերոնշյալ ծախսերը ավելացել են՝ պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Նշված փոփոխություններն էլ հիմք են դարձել մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքի աճի համար (2,8-5,25հզ. դր.): 2019թ նվազել են սարքավորումների ձեռք բերման ծախսերը:





Յուցանիշ 4.9. Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը

Յուցանիշ 4.9	2015	2016	2017	2018	2019
Էներգիայի տարեկան ծախսը (հզ. դր.)	4945	4980	6217	4779	3267
Ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը	1751	1740	1726	1783	1387
Տեսակարար էներգածախսը (հզ. դր.)	**2.8**	**2.9**	**3.6**	**2.7**	**2,4**

Վերջին երեք տարիներին տարեկան էներգածախսը փոփոխական է՝ պայմանավորված ջեռուցման տարբեր միջոցների կիրառմամբ հյուրանոցային համալիրում, համակարգչային սրահների ավելացմամբ և վերազինմամբ, նաև խնայողաբար օգտագործմամբ:





Յուցանիշ 4.10. Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.10	2015	2016	2017	2018	2019
Ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսը (հզ. դր.)	1164	1192	1220	1100	836
Ուսանողների և դասախոսների միջին տարեկան թիվը	1751	1740	1726	1783	1387
Ջրի տեսակարար ծախսը (հզ. դր./մարդ)	**0.66**	**0.69**	**0.71**	**0.62**	**0,60**

2015-2019 թվերին տարեկան ջրածախսն ավելացել է, ինչը պայմանավորված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, մասնաճյուղի և հրավիրված դասախոսների համար նախատեսված հյուրանոցի կենցաղային պայմանների բարելավմամբ: 2019թ. -ին այն նվազել է ուսանողների թվի նվազման պատճառով:





ԲՆԱԳԱՎԱՌ 5.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուցանիշ 5.1.	Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.2.	Հիմնական դասախոս-ասպիրանտ քանակական հարաբերակցությունը
Յուցանիշ 5.3.	Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը
Յուցանիշ 5.4.	Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.5.	Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը, հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը
Յուցանիշ 5.6.	Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.7.	Մասնաճյուղի էլեկտրոնային կայք էջը

Ցուցանիշ 5.1. Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	3	2	1	0	0
Հիմնական դասախոսական կազմը	97	98	95	93	82
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշիռը (%)	**3.1**	**2.0**	**1.1**	**0.0**	**0.0**

Վերջին տարիներին հետազոտական նախագծերում ընդգրկված հիմնական դասախոսների մասնաբաժինը փոքր է, նույնիսկ վերջին 3 տարիներին 0 է, որովհետև այդ ցուցանիշում ներկայացված են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի ցուցանիշները՝ առանց ԵՊՀ-ից համատեղությամբ աշխատող դասախոսների թվի:



Ցուցանիշ 5.2. Հիմնական դասախոս-ասպիրանտ(հայցորդ) քանակական հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական դասախոսական կազմ	97	97	95	93	82
Ասպիրանտներ /հայցորդներ/	15	7	11	5	3
Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը	**6.5**	**13.9**	**8.6**	**18. 6**	**27.3**

Այս թվերը ցույց են տալիս, որ մասնաճյուղի աշխատակազմից պարբերաբար շարունակում են իրենց կրթությունը, զբաղվում են գիտությամբ: Հետագայում նրանք լրացնում են մասնաճյուղի դասախոսական կազմը:



Ցուցանիշ 5.3. Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.3	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հիմնական դասախոսական կազմը	97	68	68	71	82
Գիտական հրատարակությունների թիվը	120	58	51	57	39
Այդ թվում՝ մենագրություններ		2	3	1	1
Ուսումնական ձեռնարկ, կամ դասագիրք		5	1	9	1
գիտական հոդվածներ		50	36	47	37
զեկուցումների թեզիսներ		1	11	0	0
Գիտական հրատարակություններ/ դասախոսներ հարաբերակցությունը	1.24	0.85	0.75	0.80	0.48

Վերջին 3 տարիներին մեկ դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների թիվը կազմում է **0.85, 0.75 և 0.80,** իսկ 2019/20 ուստարում՝ **0.48,** և վերջին 4 ուստարիների համար գիտական հրատարակությունների վերաբերյալ բերված թվերը ներկայացնում են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի՝ առանց ԵՊՀ-ից հրավիրվածների, հրատարակությունների թիվը: Այդ պատճառով վերջին 4 տարիների թվերը համեմատաբար ցածր են: Վերջին տարվա համեմատաբար փոքր ցուցանիշը պայմանավորված է նաև ՀՀ-ում տեղի ունեցող ներքաղաքական պատճառներով և covid19-ով, ինչպես նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի ԲՈԿ-ի ցանկից դուրս մնալով:





Յուցանիշ 5.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.4	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ընդհանուր հրատարակությունների թիվը	136	69	51	101	39
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	1	1	3	0	0
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	0.7	1.4	5.9	0.0	0.0

Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թվի բացակայությունը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի հիմնական դասախոսական կազմից արտերկիր գոծուղումների բացակայությամբ, որը հետևանք է նաև ԵՊՀ-ի համապատասխան բաժնի հետ ոչ բավարար համագործակցությամբ:





Ցուցանիշ 5.5. Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը և հաշվեկշիռը, համակարգիչների թիվ-մասնակից հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.5	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը	2	0	0	0	0
Համակարգիչների ընդհանուր թիվը	150	168	188	178	180
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը (%)	**1.3**	**0.0**	**0.0**	**0**	**0**
Հետազոտական նախագծերում ընդգրկված մասնակիցների թիվը	2	1	0	0	0
Համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը	**1.00**	**0.00**	**0.00**	**0**	**0**

2018-19 ուստարվա ընթացքում 15 համակարգիչ հանվել է կիրառությունից, որոնց վրա աշխատանքներ են տարվում հնարավորինս աշխատանքային վիճակի բերելու կամ դրանց աշխատող սարքերի միջոցով մյուսների խափանումները վերացնելու, պարամետրերը լավացնելու համար: Համակարգիչների պարամետրերը լավացնելու նպատակով ձեռք են բերվել DDR3/4GB օպերատիվ հիշողություններ և 112 համակարգիչ ունի 4 GB օպերատիվ հիշողություն: Հետազոտական նախագծեր վերջին տարիներին մասնաճյուղում չեն իրականացվում, հետևաբար ընդգրկված մասնակիցներ չկան և համակարգիչներ այդ նպատակով չեն օգտագործվում:

Յուցանիշ 5.6. Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.6	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը	0	0	0	0	0
Ինտերնետային կապի կետերի ընդհանուր թիվը	150	163	188	178	180
Հաշվեկշիռը (%)	3.5	0.0	0.0	0.0	

Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետ կապի կետերի հաշվեկշիռը 2015/16 ուստարուց սկսած 0-է, առայժմ մասնաճյուղում հատուկ դրամաշնորհային և գիտական ծրագրեր չեն իրականացվում:

Յուցանիշ 5.7. Մասնաճյուղի էլեկտրոնային կայք էջը

Յուցանիշ 5.7	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Մասնաճյուղի կայքի տարեկան այցելությունների թիվը	117.25	158.272	181.568	203.600	234.806
Էլեկտրոնային գրադարանի այցելությունների թիվը			850	2.044.820	2.530.344
Առկա էլեկտրոնային ուսումնական նյութերի թիվը			864	954	1003

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային կայքում տեղադրված է մասնաճյուղի գործունեության և ուսումնական գործընթացին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը: Կայքը պարբերաբար գտնվում է զարգացման և բարելավման փուլում, որի արդյունքը աճող այցելություններ թիվն է:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանը ստեղծվել է 2017 թվականի հոկտեմբերին: 2017 թվականի դեկտեմբերից 2018 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում կայքում տեղադրվել են մասնաճյուղում առկա և մասնաճյուղին հասանելի ամբողջ էլեկտրոնային գրականությունը: Որից հետո կայքը պարբերաբար համալրվում է անհրաժեշտ և նոր գրականությամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 6.	ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Յուցանիշ 6.1.	Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում
Յուցանիշ 6.2.	Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը
Յուցանիշ 6.3.	Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը
Յուցանիշ 6.4.	Բուհ-գործատու համագործակցությունը

Յուցանիշ 6.1. Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում

Յուցանիշ 6.1	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	0	0	0	0	0
Հիմնական **դասախոսական** կազմը	97	97	95	93	82
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	0.0	0.0	0.0	0.0	0.0

Միջազգային նախագծերում Մասնաճյուղից ներգրավված դասախոսներ չկան: Մասնաճյուղում առայժմ չկան միջազգային համագործակցության ծրագրեր:

Յուցանիշ 6.2. Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը

Յուցանիշ 6.2	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Համալսարանական պարբերականներ	3	3	5	5	3

Համալսարանում պարբերաբար հրատարակվում են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցնիշներ»-ը և «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության տարեկան հաշվետվություն»-ը:



Յուցանիշ 6.3. Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Յուցանիշ 6.3	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը	7	7	7	7	7
Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք	5	5	5	5	5
Բակալավրի կրթական ծրագրեր	14	17	18	17	16

Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը 2014/15 ուստարուց ավելացել է՝ պայմանավորված հայերեն և օտարալեզու գովազդային բուկլետների հրատարակմամբ: ԵՊՀ ԻՄ-ում կազմվում և պաշտոնական կայքում տեղադրվում են առկա (4 ֆակուլտետներ) և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքեր»-ը, որոնք հասանելի են բոլոր ուսանողներին:





Յուցանիշ 6.4. Բուհ-գործատու համագործակցությունը

Յուցանիշ 6.4	2015/16	2016/17	2017/18	2018/19	2019/20
Ուսումնական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	5	5	6	6	6
Արտադրական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	25	24	25	33	28
Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի և միջոցառումների թիվը				18	17
Ընդամենը	30	29	31	57	51

Մանկավարժական և արտադրական պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղը 2019/20 ուստարվա ընթացքում ունեցել է 34 պայմանագիր և 1 համաձայնագիր:

Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ ակնարկային դասախոսություններ իրականացվել են 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում: Covid-19 համաճարակի տարածումը կանխելուն ուղղված սահմանափակումներով պայմանավորված «Բաց դռներ»-ի օրեր, բաց դասեր և օլիմպիադա չեն իրականացվել: